

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-43 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին կետի չորրորդ պարբերության երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետը, ինչպես նաև սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձանց նկատմամբ, եթե սույն կետում և սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետում նշված գույքը չի հանդիսանում անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացվող (իրականացված) ձեռնարկատիրական գործունեության առարկա:»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 33-րդ կետից հանել «ջրօգտագործողների ընկերությունների կողմից» բառերը:

Հոդված 3. Օրենքի 35-րդ հոդվածում «անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց» բառերից հետո լրացնել «, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձանց» բառերը:

Հոդված 4. Օրենքի 38-րդ հոդվածի երկրորդ և երրորդ պարբերություններում «(վարկային կազմակերպությանը)» բառերից հետո լրացնել «կամ պետության ստեղծած հիմնադրամին» բառերը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ